«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

18 Ապրիլի 2023, N 6 - 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՑ ՀԵՌԱՑՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1242 - Ն ՀՐԱՄԱՆՈՎ (ԽՄԲ. 17.12.2018 Թ. N 1676 - Ն) ՀԱՍՏԱՏՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՐԳԻ» 12-ՐԴ ԿԵՏՈՎ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԵՐԻ ՔԱՆԱԿԻՑ ԱՎԵԼԻ ՏԵՂԻՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ՈՒՍԱՆՈՂ ԱՐԵԳ ԳԱՐԵԳԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՎՃԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով՝
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2022 թվականի սեպտեմբերի 16-ի N ՈՒԲ /102/ 1-Ա հրամանով համալսարանի «Կառավարում» մասնագիտության «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա վճարովի ուսուցման համակարգի 4-րդ կուրսի 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից հեռացված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 12-րդ կետով լիցենզիայով սահմանված տեղերի քանակից ավելի տեղին հրամանագրելու համար «Կառավարում» մասնագիտության «Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա վճարովի ուսուցման համակարգի 4-րդ կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից ուսանողական իրավունքները վերականգնող ուսանող Արեգ Գարեգինի Կարապետյանին ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին հարցը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի N 27/11.2/8224-2023 գրությունը և հաշվի առնելով, որ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում Արեգ Գարեգինի Կարապետյանը մասնակցել է 2020 թվականի հուլիսին հայ-ադրբեջանական շփման գծի Տավուշ-Թովուզ հատվածում ծավալված մարտական գործողություններին, ինչպես նաև նրա եղբայրը զոհվել է արցախյան 44-օրյա պատերազմում՝ «Հայաստանի պետական

տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության **«Կառավարում (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի բակալավրիատի հեռակա վճարովի ուսուցման համակարգի 4-րդ կուրսում 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից** լիցենզիայով սահմանված տեղերի քանակից ավելի տեղին հրամանագրելու համար **թույլատրել** ուսանողական իրավունքները վերականգնող ուսանող **Արեգ Գարեգինի Կարապետյանին վճարել** մեկ առարկայի (4 կրեդիտ) ուսումնական պարապմունքներին մասնակցելու համար հաշվարկված ուսման վարձը՝ 37.500 (երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ազատելով նրան նախկինում ուսումնասիրած և կրեդիտ հավաքած առարկաների ուսումնական պարապմունքներից:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2023 թ. ապրիլի 18
Երևան